Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 11 (352) 1-17 հունիս, 2014թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

ՀՀ պարտվողական դիվանագիտությունը վտանգում է հայ ժողովրդի ապագան

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը նախատեսում է տարածաշրջանային այց Հայաստան եւ Ադրբեջան: Հունիսի 17-ին նա երկօրյա այցով մեկնեց Բաքու: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի այցի հիմնական նպատակն է լինելու համոզելու Ադրբեջանին միանալ Եվրասիական տնտեսական միությանը: Ռուսաստանի կողմից արդեն իսկ պաշտոնական հայտարարություններ են եղել, որ Ռուսաստանի համար Ադրբեջանը Եվրասիական միության ցանկալի անդամ կլինի, իսկ պաշտոնական Բաքվից դեռեւս ոչ մի հրապարակավ արձագանք չի եղել: Ի դեպ, Ղազախստանի նախագահը վերջերս նաեւ Թուրքիային է հրավիրել դառնալ Եվրասիական տնտեսական միության ասոցացման անդամ:

Բնականաբար, եթե նույնիսկ պաշտոնական Բաքուն ցանկություն հայտնի միանալ Ռուսաստանի գլխավորած միությանը, ապա իր անդամակցության դիմաց Լեռնային Ղարաբաղի հարցում լուրջ զիջումներ կպահանջի Մոսկվայից:

Ռուսաստանի ԱԳՆ մամլո քարտուղար Ալեքսանդր Լուկաշեւիչը ադրբեջանական լրատվամիջոցներին մեկնաբանելով արտգործնախարարի այցը Բաքու՝ նշել է, որ Ադրբեջանը Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է Հարավային Կովկասում: Սա միանգամայն անհասկանալի մոտեցում է պաշտոնական Մոսկվայի կողմից տարածաշրջանի նկատմամբ: Հայաստանն ու Ռուսաստանը միեւնույն ռազմավարական բլոկի՝ ՀԱՊԿ-ի անդամ են եւ ունեն փոխադարձ պարտավորություններ ռազմական անվտանգության ոլորտում: Այս պարագայում՝ անընդունելի է պաշտոնական Մոսկվայի նման պահվածքը, այսինքն՝ ՀԱՊԿ անդամ հանդիսացող իր գործընկերոջ թշնամուն իր ռազմավարական գործընկեր հայտարարելը: Լուկաշեւիչը նաեւ հայտարարել է, որ 2013 թվականին երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 3.5 միլիարդ դոլար: Իսկ այդ ապրանքաշրջանառության հիմնական մասը կազմում է ռուսական ռազմատեխնիկայի վաճառքն Ադրբեջանին:

Այսօր ՀՀ իշխանությունները եւ իշխանամետ վերլուծաբանները փորձում են արդարացնել Ռուսաստանի նման պահվածքը՝ նշելով, որ այն չի վնասի Հայաստանի ռազմական անվտանգությանը եւ, որ Ռուսաստանը զենք վաճառելով Ադրբեջանին՝ փորձում է հավասարակշռություն հաստատել հակամարտող կողմերի միջեւ: Սակայն այսօր Ադրբեջանի պաշտպանության նախարարության մակարդակով հայտարարություն է արվում, որով սպառնում են Ռուսաստանից գնված եւ Նախիջեւանում տեղադրված ռուսական գերժամանակակից զինտեխնիկայով, ընդ որում՝ սպառնում են արդեն ոչ թե Ստեփանակերտին, այլեւ Երեւանին:

Այս ամենը, անշուշտ, ՀՀ իշխանությունների վարած արտաքին քաղաքականության արդյունք է: Հայաստանի վարած քաղաքականությունը կատարյալ ֆիասկոյի է ենթարկվել:

Այսօր Հայաստանի հետ խոսում են վերջնագրի տեսքով եւ կոշտ պահանջներ ներկայացնում՝ փաստացի ստիպելով ձեռք քաշել Արցախից:

Նագարբաեւի՝ Հայաստանի սահմանները ճշգրտելու անհիմն պահանջի վերաբերյալ որեւէ արձագանք չի եղել Աստանայում ներկա ՀՀ նախագահի գլխավորած պատվիրակության կողմից:

➔ 2

Եվրասիական միության «պատկերացումներով»՝ Արցախը Ադրբեջա՞ն է լինելու

Վերջերս բազմաթիվ մեկնաբանություններ ու կարծիքներ հնչեցին՝ կապված Աստանայում տեղի ունեցած հայտնի դեպքերի շուրջ, երբ Եվրասիական տնտեսական միության Բարձրագույն խորհրդի ընդլայնված նիստի ժամանակ Նազարբաեւը կարդաց Ալիեւի նամակն ու պահանջեց՝ ԵՏՄ-ին անդամակցելու համար Հայաստանին ուղղված պահանջների մեջ ավելացնել կետ Հայաստանի սահմանների վերաբերյալ:

Կրքերն էլ ավելի թեժացան, երբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանն Աստանայի դեպքերից հետո, մի քանի օր ուշացումով անդրադարձավ Աստանայում տեղի ունեցածին եւ ասաց, որ Նազարբաեւի հնչեցրածը տհաճ է, Հայաստանը չի պատրաստվում Արցախի հետ միասին անդամակցել Եվրասիական միությանը, ու հավելեց, որ՝ «Ղարաբաղը, գոնե մեր օրենսդրությամբ, գոնե մեր պատկերացումներով, Հայաստանի մաս չէ այսօր կազմում». վերջինս մեկ այլ թեմա է, որին հետագայում կանդրադառնանք:

Այս ամենից հետո՝ չնայած, որ ինքնին ամեն ինչ պարզ է եւ պետք է շուտով սպասել, որ Արցախը փաստացի կենթարկվի տնտեսական շրջափակման, այս անգամ արդեն Հայաստանի Հանրապետության կողմից բազմաթիվ մեկնաբանություններ եղան եւ սկսեցին հայտարարել, որ Արցախի եւ Հայաստանի Հանրապետությունների սահմանագծին մաքսակետ չի լինի: Առաջ քաշվեց մի թեզ, որտեղ հնչեցվում է, որ դե ֆակտո մաքսակետ չի լինելու: Սա ինչ է նշանակում. ոչ ոք չի կարող իր «պատկերացումներում» հասկանալ: Սակայն խնդիրն իրականում մաքսակետ լինել կամ չլինելը չէ: Դա, իհարկե «տհաճ է», բայց կա մեկ այլ, ավելի կարեւոր հարց, որը կարծես դուրս է մնացել վերլուծաբան-չվերլուծաբանների դիտարկումներից, քաղաքագետների ու քաղաքական այլ մարդկանց հայտարարություններից: Միգուցե դա դիտմամբ է արվում, որպեսզի մաքսակետ լինելու-չլինելու հարցին այդքան մեծ ուշադրություն տալով՝ մոռացության մատնվի մեկ այլ կարեւոր հարց՝ սահմանների հարցը:

Եվ այսպես, գլխավոր հարցը, որ պետք է տրվի ՀՀ իշխանություններին՝ Մաքսային միությունում եւ Եվրասիական տնտեսական միությունում ինչպես է դիտարկվելու Հայատանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության միջեւ սահմանը, այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է վերը նշված միություններին՝ առանց Արցախի (ըստ ՀՀ նախագահի): Պարզ է, որ այդ միությունների սահմանները կլինեն Հայաստանի Հանրապետության սահմանները, սակայն պարզ չէ, թե ԵՏՄ-ում եւ ՄՄ-ում ինչպես կդիտարկեն այդ սահմանը: Այն լինելու է՝ որպես Եվրասիական տնտեսական միության եւ Արցախի Հանրապետության միջեւ սահման, թե Եվրասիական տնտեսական միության եւ Ադրբեջանի միջեւ սահման: Հաշվի առնելով Աստանայի դեպքերը, Ալիեւի նամակներն ու Նազարբաեւին ուղղված նրա շնորհակալությունները՝ երկրորդ տարբերակն ավելի իրատեսական է: Ուստի, այստեղ հարկ է հիշատակել 1992թ. հուլիսի 8-ի ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը, որի 2-րդ կետում նշված է. «Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»: Թերեւս այստեղ ամեն ինչ ասված է եւ ավելորդ մեկնաբանությունների կարիք չկա:

Այստեղից մեկ դիտարկում՝ յուրաքանչյուր ոք, ում հուզում է Արցախի ապագան, պետք է պահանջի ՀՀ իշխանություններից, որպեսզի հստակ պատասխան տրվի վերը նշված հարցին եւ թույլ չտրվի, որպեսզի ՀՀ օրենսդրությանը հակասող որոշում կայացվի:

ԵԱՀԿ-Ն երկակի ստանդարտներ է կիրառում

ԱՀԿ դիտորդական առաքելությանն ընդառաջ, Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի խախտումը կարծես թե աննկատ է մնացել հենց առաքելությունն իրականացնողների կողմից, ինչպես եւ շարունակում են աննկատ մնալ ադրբեջանական կողմի դիվերսիոն...

Կարդացեք 3-րդ էջում

Քեսաբն ամբողջությամբ ազատագրված է

Սիրիական բանակն ու պաշտպանական ջոկատներն ազատագրել են Քեսաբը: Այս մասին հաղորդում է «Գանձասար» շաբաթաթերթի ֆեյսբուքյան էջը: Ըստ տեղեկատվության աղբյուրի՝ Քեսաբը վերագտել է իր խաղաղությունը, երբ...

Կարդացեք 5-րդ էջում

Նազարբաեւը Թուրքիային հրավիրում է Եվրասիական միություն

Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը Թուրքիայում հայտարարել է, որ Թուրքիան կարող է դառնալ Եվրասիական տնտեսական միության ասոցացված անդամ: Այդ մասին նա ասել է Թյուրքախոս պետությունների համագործակցության խորհրդի չորրորդ գագաթաժողովի ժամանակ կայացած մամլո ասուլիսի ժամանակ:

«Եվրասիական տնտեսական միության պայմանագիրը բաց է այլ պետությունների անդամակցման համար: Օրինակ՝ Թուրքիան եւ այլ երկրներ կարող են ապագայում դառնալ տվյալ միավորման ասոցացված անդամ»,- նշել է Նազարբաեւը:

Նա նաեւ նշել է, որ Հայաստանը եւ Ղրղզստանը ծրագրում են միանալ Եվրասիական միությանը, իսկ մի շարք այլ երկրներ էլ շահագրգռված են ստեղծվելիք Միության հետ տնտեսական կապերի զարգացմամբ:

Հիշեցնենք, որ Ռուսաստանը, Բելոռուսը եւ Ղազախստանը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի ժամանակ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր են ստորագրել՝ մայիսի 29-ին Աստանայում, որն ուժի մեջ կմտնի 2015թգ հունվարի 1-ից:



Արդեն հայտնվել են տեղեկություններ այն մասին, որ Եվրասիական տնտեսական միության հիմնադիր անդամները կարող են ունենալ վետոի իրավունք ապագա Միության՝ այլ երկրների անդամակցության եւ ընդունվելիք որոշումների համար: Հստակ երեւում է, որ երեք երկրների կողմից Հայաստանի անդամակցության ձգձգումն ուղղված է հենց դրան. այսինքն՝ Հայաստանին չտալ վետոի իրավունք: Ներկայումս հատկապես Ղազախստանի կողմից արվում է ամեն ինչ, որպեսզի Հայաստանը չդառնա Եվրասիական տնտեսական միության հիմնադիր անդամ՝ առաջ քաշելով անկատարելի եւ նվաստացուցիչ պահանջներ: Հենց դրան էր ուղղված Ալիեւի նամակի ընթերցումն ու Հայաստանի սահմանների վերաբերյալ հարցի բարձրացումը: Դրանից կարելի է եզրակացնել, որ Թուրքիային Եվրասիական տնտեսական միության ասոցացված անդամի կարգավիճակ տալը եւ նույնիսկ անդամակցությունն այդքան էլ անհնարին չէ ու կարող է իրականանալ:

Վ.Հ.

Ադրբեջանը Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է. Ա.Լուկաշեւիչ

«Ադրբեջանը Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է Հարավային Կովկասում»,- այդ մասին APA գործակալության փոխանցմամբ հայտարարել է Ռուսաստանի ԱԳՆ մամլո քարտուղար Ալեքսանդր Լուկաշեւիչը:

Լուկաշեւիչի հավաստմամբ՝ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը հունիսի 17-18-ին այցելելու է Ադրբեջան, ինչը կլինի ընթացիկ տարում երկու երկրների արտգործնախարարների 4-րդ հանդիպումը. «Ադրբեջանը Հարավային Կովկասում մեր ռազմավարական գործընկերն է: 2013 թվականին երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 3.5 միլիարդ դոլար: Դա 4 տոկոսով ավելին է՝ համեմատած 2012 թվականի հետ: Ադրբեջանում գործում է ռուսական ավելի քան 500 ընկերություն»: Լուկաշեւիչը տեղեկացրել է նաեւ, որ ներկայումս ընթանում են Ռուսաստան-Ադրբեջան միջկառավարական հանձնաժողովի տնտեսական համագործակցության գծով 16-րդ նիստի նախապատրաստական աշխատանքները. «Մեր համագործակցության կարեւորագույն տարրերից մեկը Ռուսաստանի ու Ադրբեջանի սուբյեկտների միջեւ զարգացումն է: Մենք մեծ հույսեր ենք կապում ռուս-ադրբեջանական միջազգային 5-րդ ֆորումի հետ, որը հունիսի 23-24-ին անցկացվելու է ադրբեջանական Գաբալա քաղաքում»:

«ԱՊԱՌԱԺ»

Ադրբեջանը Հայաստանին սպառնում է ռուսական զենքով

Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայության ղեկավար Վագիֆ Դարգյահիլին սպառնացել է Հայաստանին մեծ քանակությամբ զինտեխնիկայով՝ հիմնականում ռուսական արտադրության, հայտարարելով. «Բավական է միայն նշել, որ Նախիջեւանում տեղակայված «Սմերչ» հրթիռային համազարկի համալիրը ունակ է ոչնչացնել Հայաստանում գտնվող ցանկացած թիրախ»: Նա այս մասին հայտարարությունն արել է՝ մեկնաբանելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի՝ հունիսի 12-ին, խորհրդարանում արած հայտարարությունը:

Նախօրեին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հայտարարել էր, որ մենք պետք է հակառակորդի, այսպես ասաց, «ռազմատենչ եռանդը» լուծենք հակագործողությունների կամ կանխարգելիչ գործողությունների միջոցով՝ ավելացնելով, որ սահմանային իրավիճակի յուրաքանչյուր հատվածի համար մենք ունենք ե՛ւ ռազմավարություն, ե՛ւ պահի համար մարտավարություն:

Թերեւս, ադրբեջանական տարբեր պաշտոնյաների կողմից Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների հասցեին հնչեցվող ռազմատենչ հայտարարություններն ու սպառնալիքները նորություն չեն մեզ համար, բայց այն, որ Հայաստանին վախեցնում են Հայաստանի ռազմավարական դաշնակից համարվող Ռուսաստանում արտադրված եւ Ադրբեջանին վաճառած հարձակողական զինատեսակներով, մտորելու տեղիք է տալիս: Հնարավոր է, որ ադրբեջանցի պաշտոնյան հատուկ է ընդգծել հենց ռուսական արտադրության «Սմերչ»-ի առկայությունը Նախիջեւանում: Մենք արդեն անդրադարձել ենք ռուսական զենքի՝ Ադրբեջանին վաճառելու անտրամաբանական եւ անընդունելի հանգամանքներին:

Միգուցե պատահական չէ, որ գրեթե զուգահեռաբար Կրեմլի «խոսնակ» համարվող Դմիտրի Կիսելիովը ՀՀ ԱԺ-ում սպառնաց Հայաստանին՝ ասելով՝ եթե Հայաստանում ռուսաց լեզվին պաշտոնական ստատուս չտրվի եւ Հայաստանում չշատացվեն ռուսական դպրոցների թիվը, ապա Հայաստանը կզրկվի Ռուսաստանի անվտանգության երաշխավորությունից:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ալիեւը շնորհակալություն է հայտնել Նազարբաեւին

Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայքում տեղեկություն է հայտնվել, որտեղ ասվում է, որ Ադրբեջանի նախագահը շնորհակալություն է հայտնում Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւին՝ Եվրասիական տնտեսական միությունում Ադրբեջանի դիրքորոշմանն աջակցելու համար:

Հաղորդագրության մեջ մասնավորապես ասված է. «Նախագահ Իլհամ Ալիեւը իր անունից եւ մեր ժողովրդի անունից Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւին իր երախտագիտությունն է հայտնել Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի նիստում Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցելու կապակցությամբ Ադրբեջանի դիրքորոշմանն աջակցելու համար»:

Ալիեւը իր երախտիքը Նազարբաեւին հայտնել է Թուրքիայի Բոդրում քաղաքում տեղի ունեցած երկկողմ հանդիպման ժամանակ:

Հիշեցնենք, որ Թուրքիայի Բոդրում քաղաքում ընթանում է Թուրքալեզու պետությունների համագործակցության 4-րդ նիստը:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պարտվողական դիվանագիտությունը վտանգում է հայ ժողովրդի ապագան

1 ← Մի քանի օր ուշացումով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ՀՀԿ երիտասարդների հետ հանդիպման ժամանակ անդրադառնալով Նազարբաեւի պահանջներին՝ նշեց, որ դա նրա համար ընդամենը տհաճ էր, իսկ դրան հաջորդած՝ Սարգսյանի արտաբերած արտահայտությունները «տհաճ» էր յուրաքանչյուր հայի համար եւ անհասկանալի յուրաքանչյուր՝ ազգային մտածելակերպ ունեցող մարդու համար:

Մեկ-երկու նախադասության մեջ նա առնվազն երկրի նախագահի համար թույլ տվեց երեք կոպիտ սխալ՝ նախ նշելով՝ «... իսկ ո՞վ է ասել, որ մենք Ղարաբաղով ենք մտնելու Մաքսային միություն: Ղարաբաղը գոնե մեր օրենսդրությամբ, գոնե մեր պատկերացումներով Հայաստանի մաս չէ այսօր կազմում: Իսկ որ Մաքսային միությանն անդամակցելը նպաստում է Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծմանը՝ սա միանշանակ է»:

Սարգսյանը երեւի տեղյակ չէր, որ ընդամենը մի քանի օր առաջ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը հայտարարել է, որ Հայաստանը ԵՏՄ մտնելու է Արցախի հետ: Իսկ ինչ վերաբերում է Ղարաբաղը Հայաստանի մաս չկազմելուն, ապա Ս. Սարգսյանը պետք է գոնե տեղյակ լիներ ՀՀ անկախության հռչակագրի տեքստին, որի նախաբանում նշված է. «... հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա ...»: Այսքանից հետո ինչպես կարելի է պնդել, որ օրենսդրորեն Արցախը Հայաստան չէ: Այսինքն, Հայաստանի ստեղծման առաջին իսկ օրվանից Արցախը դիտարկվում է որպես Հայաստանի Հանրապետության մաս: Սա օրենսդրական մասով, իսկ պատկերացման մասով յուրաքանչյուր հայի համար Արցախը հանդիսանում է Հայաստանի անբաժանելի մաս:

Սարգսյանը նշում է նաեւ, որ Մաքսային միությանն անդամակցելը նպաստում է Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծմանը, սակայն ինչպես պետք է նպաստի, եթե դեռ չանդամակցված Հայաստանի հետ արդեն իսկ խոսում են վերջնագրի տեսքով՝ անտեսելով դիվանագիտական էթիկայի բոլոր կանոնները, գործընկերների հանդիպման ընթացքում կարդալով իր գործընկերոջ թշնամի երկրի նախագահի նամակը:

Արցախը ազատագրելու եւ այն հայկական պահելու համար երկար ու դաժան պայքար է մղվել, գիտակցված պայքար, որտեղ վճռվում էր ոչ միայն Արցախի ապագան, այլեւ Հայաստանի եւ հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը: Ոչ միայն պատմական հարթակում, այլեւ իրավական հարթակում, մասնավորապես միջազգային իրավունքի տեսակետից Արցախի համար մղված պայքարը օրինավոր է, սակայն այսօր ՀՀ իշխանությունը չի կարողանում միջազգային հարթակներում ներկայացնել իրողությունը եւ պաշտպանել հայ ժողովրդի շահերը՝ մեկը մյուսի հետեւից ձախողումներ արձանագրելով Արցախի խնդրի լուծմանն ուղղված միջազգային բանակցություններում: Միջազգային ատյաններում ԼՂՀ հարցով զբաղվող պատասխանատուները պետք է հասկանան, որ նմանօրինակ՝ ներկայիս պարտվողական դիվանագիտություն վարելը վտանգի տակ է դնում է հայ ժողովրդի ապագան, ինչն անթույլատրելի է:

ԵԱՀԿ-Ն երկակի ստանդարտներ է կիրառում

ԵԱՀԿ դիտորդական առաքելությանն ընդառաջ՝ Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի խախտումը կարծես թե աննկատ է մնացել հենց առաքելությունն իրականացնողների կողմից, ինչպես եւ շարունակում են աննկատ մնալ ադրբեջանական կողմի դիվերսիոն գործողությունները եւ դիպուկահարների կրակոցները: Միջազգային դիտորդների «անաչառ» վերաբերմունքն իսկապես խորհելու տեղիք է տալիս:

«Ոչ միայն ԵԱՀԿ դիտորդական առաքելության, այլ առհասարակ բանակցային գործընթացում մենք բազմիցս ականատես ենք եղել երկակի ստանդարտների կիրառման,- նշեց ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը: - Այդ ստանդարտները գործում են ի օգուտ Ադրբեջանի եւ ի վնաս Արցախի: Ցավոք, կան նման բազմաթիվ դեպքեր, երբ երկակի ստանդարտների կիրառման արդյունքում արցախյան կողմի արձագանքներին ԵԱՀԿ դիտորդական առաքելություն իրականացնող պաշտոնատար անձինք իրենց պաշտոնական տեսակետներում կամ հայտարարություններում հանդես չեն գալիս համապատասխան դիտարկումներով, եւ այդ ամենը մատնվում է քար լռության: Բացառություն չէր նաեւ հունիսի 10-ին կայացած դիտորդական առաքելությունը, որի սկսելուն ընդառաջ եղել է հրադադարի ռեժիմի խախտում: Դրան հաջորդել է դիտորդական առաքելություն իրականացնողների լռությունը: Սա փաստում է մեկ բան. ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության ներկա փուլի իրական պատկերը՝ դիտորդները միջազգային հանրությանն ուղղակի կերպով ներկայացնելու խուսափողական քայլեր են անում»:



Ի դեպ, սա առաջին դեպքը չէ, երբ ադրբեջանական կողմը ԵԱՀԿ առաքելություն իրականացնողներին դուրս չի բերում առաջապահ դիրքեր, եւ այս փաստը նույն միջազգային հարթակներում շարունակում են անտեսել:

«Այստեղ հարցը ադրբեջանական կողմի խուսափողական գործողությունները կամ քայլերը չեն,- Aparaj.am-ին ասաց Դավիթ Իշխանյանը: - Ադրբեջանական կողմը դիտորդական առաքելությանն առաջապահ դիրքեր չի բերում, ինչը իրականում ԵԱՀԿ առաքելություն իրականացնող պաշտոնական շրջանակների թողտվությամբ է: Դժբախտաբար, այդ պահանջները երկակի ստանդարտների են վերածվում, եւ արդյունքում՝ մի կողմի համար պահանջներն այլ են, իսկ մյուս կողմի համար՝ այլ: Հակամարտության կողմերից մեկը, բաց քաղաքականություն վարելով, համապատասխան պայմաններ է ստեղծում դիտորդական առաքելություն իրականացնողների համար: Նման պահվածքը մատնվում է քար լռության: Որքան էլ տարօրինակ լինի՝ այդ լռությունը չի ունենում պահանջի շարունակականություն: Այստեղ կան որոշակի երեւույթներ, որոնք մտորումների տեղիք են տալիս: Դա այն է, որ ադրբեջանական կողմը սահմանին պարբերաբար խախտում է հրադադարի ռեժիմը, իսկ դիպուկահարները շարունակում են մնալ ադրբեջանական դիրքերում, եւ ադրբեջանցիներն իրենց քայլերը պարփակելու լավագույն միջոցն են օգտագործում՝ դիտորդական առաքելություն իրականացնողներին չեն թողնում դուրս գալ առաջապահ դիրքեր»:

Անի ԱՉԱՏՅԱՆ

ԵԱՀԿ-ն շարունակում է աչք փակել Ադրբեջանի գործողությունների վրա

ԵԱՀԿ առաքելությունը հունիսի 10-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն պլանային դիտարկում է անցկացրել Հադրութի ուղղությամբ՝ Հորադիզ բնակավայրի մոտակայքում:

ԼՂՀ պաշտպանության բանակի դիրքերից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի դաշտային օգնական Եվգենի Շարովը /Ուկրաինա/ եւ ԵԱՀԿ ԳՆԱՆ գրասենյակի աշխատակից Պետեր Սվեդբերգը, ինչպես նաեւ ԵԱՀԿ բարձր մակարդակի պլանավորման խմբի /ԲՄՊԽ/ ներկայացուցիչ, փոխգնդապետ Դան Խարվեյը /Իռլանդիա/:

Սահմանի արցախյան կողմից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպշիկը եւ նրա դաշտային օգնական Խրիստո Խրիստովը /Բուլղարիա/, ինչպես նաեւ ԵԱՀԿ բարձր մակարդակի պլանավորման խմբի /ԲՄՊԽ/ ներկայացուցիչ, գնդապետ Իլհամի Դեղիրմենչիողլուն /Թուրքիա/:

Ինչպես տեղեկացնում են ԼՂՀ ԱԳ նախարարության մամլո ծառայությունից՝ մինչ դիտարկման սկիզբը ղարաբաղյան դիրքերի ուղղությամբ արձանագրվել են կրակոցներ ադրբեջանական կողմից, սակայն դիտարկումն անցել է ըստ նախատեսված ժամանակացույցի:

Aparaj.am-ի այն հարցին, թե ինչու ԵԱՀԿ դիտորդական առաքելություն իրականացնողները չեն արձագանքում կամ համապատասխան հայտարարություն չեն տարածում պլանային դիտարկումից առաջ ադրբեջանական կողմից ղարաբաղյան դիրքերի ուղղությամբ արձանագրված կրակոցների մասին, ԼՂՀ նախագահի տեղեկատվության գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանի հավաստմամբ՝ դիտորդական առաքելություն իրականացնողների հայտարարությունը չի ուշանա. «ԵԱՀԿ-ն դիտորդական առաքելություն է իրականացնում իրական իրավիճակի մասին պատկերացում կազմելու համար եւ, կարծում եմ, հրապարակային հայտարարություններ վաղ թե ուշ կլինեն»:

Ի դեպ, դիտորդական առաքելություն իրականացնող ԵԱՀԿ խումբը շարունակում է աչք փակել այն հանգամանքի վրա, որ ադրբեջանական կողմը ԵԱՀԿ առաքելությանը դուրս չի բերում առաջապահ դիրքեր: Ըստ Դավիթ Բաբայանի՝ «Ադրբեջանական կողմը հաճախ խուսափում է դիտորդական առաքելություն իրականացնողներին դուրս բերել առաջնագիծ, քանզի չի բացառվում, որ հենց այդտեղ շատ ավելի հստակ կուրվագծվի, թե իրականում ով է խախտում զինադադարի ռեժիմը: Նման քայլերով Ադրբեջանը փորձում է քողարկել իր իրական դեմքը: Կարծում եմ՝ այդ հանգամանքը չի կարող վրիպել միջազգային հանրության տեսադաշտից: Նման պահվածքով Ադրբեջանն անհարմար դրության մեջ է դնում դիտորդներին»:

Ա. ԱՉԱՏՅԱՆ

ՀՅԴ նախաձեռնությամբ Կովսականում աշխատատեղեր կբացվեն

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքում նախատեսվում է բիզնես շահագործման համար տարածք կառուցել եւ տրամադրել գործարարներին:

ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանի խոսքերով՝ ՀՅԴ մտահոգությունների դաշտում միշտ տեղ է գտել վերաբնակեցված շրջաններում ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, դրա համար բավարար արդյունք ապահովելու համար պետք է նոր աշխատատեղեր բացվեն:

Նա նշեց, որ ելնելով Հայաստանի եւ ԼՂՀ-ի ծանր սոցիալական պայմաններից, Կենտրոնական կոմիտեն ԼՂՀ իշխանությունների հետ իր ուժերը ի սպաս է դրել՝ փորձելով լուծել մի շարք սոցիալական հարցեր: Այժմ նախապատրաստական աշխատանքներ են տարվում՝ կուսակից ընկերների, ինչպես նաեւ համակիրների նվիրատվությունների միջոցով Կովսականում բիզնես պայմաններ ստեղծելու: Բոլոր գործարարներին կտրամադրվի տարածք, որը հանրավորություն կտա՝ նամանավանդ կանանց համար նոր աշխատատեղեր բացել: Նա հույս հայտնեց, որ այս նախաձեռնությանը կմիանան նաեւ Հայաստանի եւ Սփյուռքի մեր ընկերները եւ համակիր շրջանակները:

«Ինչպես բազմիցս նշվել է՝ «Դաշնակցությունը» նաեւ աշխատանքի կուսակցություն է: Որպես ընկերվարական կուսակցություն՝ մեզ համար երկրում սոցիալական խնդիրների լուծման, սոցիալական արդարության հաստատման հարցը միշտ առաջնային տեղում է: Համոզված ենք, որ մնայուն եկամուտներ ապահովելու համար կարեւոր է մնայուն աշխատանք ունենալը, եւ միայն այդ ճանապարհով է, որ ձեռք բերված եկամուտները կարող են նպաստել սոցիալական իրավիճակի բարելավմանը»,- նշեց Դավիթ Իշխանյանը:

Հիշեցնենք, որ հիմնականում Կովսականում են կենտրոնացված սիրիահայ մեր հայրենակիցները, ովքեր՝ չնայած այն հանգամանքին, որ ԼՂՀ կառավարությունից եւ մի շարք կազմակերպություններից ստացել են տարբեր օժանդակություններ, այնուամենայնիվ նրանց համար մնայուն աշխատանք ունենալը դեռ առանցքային եւ չլուծված խնդիրներից է:

«ԱՊԱՌԱԺ»

«Դաշնակցություն» խմբակցությունը հանդիպեց վարչապետ Արա Հարությունյանի հետ

Հունիսի 11-ին ԼՂՀ Ազգային ժողովի «Դաշնակցություն» խմբակցության նախաձեռնությամբ տեղի է ունեցել հերթական հանդիպումը ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել են մասնավորապես 2013 թվականի բյուջեի կատարողականին եւ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին առընչվող հարցեր: ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունը վարչապետին է ներկայացրել համայքներում հանդիպումների ժամանակ բնակիչների կողմից բարձրացված հարցերը: Խմբակցության կողմից ներկայացվեց նաեւ կրթական ոլորտին առնչվող բարեփոխումների, ենթակառուցվածքների, գյուղերում խմելու ջրի հետ կապված եւ այլ հարցեր:

Կառավարության ղեկավարը ներկայացրել է սոցիալ-տնտեսական եւ կրթական որոշ ծրագրերի իրականացման ընթացքը՝ կարեւորելով խորհրդարանի դերը պետբյուջեի կատարողականի արդյունավետության բարձրացման գործում, ակնկալելով կառուցողական առաջարկներ այդ ուղղությամբ: Անդրադառնալով կրթական համակարգին եւ կադրերի պատրաստմանը վերաբերող հարցերին՝ կառավարության ղեկավարը կիսեց կրթության ոլորտի բարեփոխումների անհրաժեշտության հարցը: Հանդիպմանը մասնակցում էր նաեւ Արցախի Հանրապետության փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը:

«Դաշնակցություն» խմբակցության պատգամավորների գնահատմամբ՝ կառավարության ղեկավարության հետ կայացած հանդիպումը կառուցողական էր:

Ա. ՆԱՐԻՆՅԱՆ

Միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի նիստ խաղաղության հեռանկարների վերաբերյալ

ԼՂՀ Ազգային ժողովում կայացավ Արցախ-Հայաստան միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի հերթական՝ 9-րդ նիստը «1994թ. մայիսյան զինադադարը եւ խաղաղության հեռանկարները» օրակարգային հարցով:

ԼՂՀ ԱԺ նախագահն իր խոսքում անդրադարձ կատարեց ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության պատմությանը: Աշոտ Ղուլյանը նշեց, որ վերջերս լրացել է Մայիսյան զինադադարի հաստատման 20-ամյակը, որը նշանակալի ռազմաքաղաքական իրողություն է, եւ երկու հայկական հանրապետությունների միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովը նույնպես անդրադառնալու է առաջիկա հեռանկարին, որի՝ հետեւությունների հանգելու անհրաժեշտությունը մեծ է. «1994 թվականի մայիսի 12-ին ուժի մեջ մտած զինադադարի համաձայնագիրը կասեցրեց Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմը, որը սպառնում էր աղետի վերածվել ամբողջ Հարավային Կովկասի տարածաշրջանի համար: Ընդ որում, այդ պատերազմն Արցախի ժողովրդին պարտադրվեց, երբ նա արդեն ինքնորոշվել եւ ձեռնամուխ էր եղել իր անկախ, ինքնիշխան պետականության կառուցմանը: Այդպիսին էր մեր հարեւանների պատասխանը ԼՂՀ ղեկավարության պատրաստակամությանը՝ շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ քննարկելու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ կապված հարցերի ողջ համալիրը»:

ԼՂՀ Ազգային ժողովի նախագահի հավաստմամբ՝ միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի 9-րդ նիստի քննարկումների նպատակն է՝ ակտիվացնել խորհրդարանական դիվանագիտության ջանքերը զինադադարի ամրապնդման եւ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ՝ այդ գործընթացին ներգրավելով նաեւ տարբեր երկրների խորհրդարանների հետ բարեկամական կապերի ու շփումների հնարավորությունները:

Հայաստանի խորհրդարանի նախագահ Գալուստ Սահակյանի խոսքով՝ պաշտոնական Բաքուն հայատյացությունը դարձրել է պետական քարոզչություն՝ հասցնելով այն առավել քան վտանգավոր մակարդակի եւ ժխտելով ու ոչնչացնելով ամեն հայկականը, նաեւ՝ համառությամբ շարունակում է բոլոր մակարդակներով եւ ամենուր տարածել կեղծ մեղադրանքներ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ հայերի հասցեին. «Ադրբեջանը շարունակում է մերժել ուժի չկիրառման վերաբերյալ համաձայնության գալու եւ վստահության միջոցների ամրապնդմանն ուղղված միջազգային հանրության շարունակական առաջարկները: Ավելին, Ադրբեջանի կողմից այսօր հնչող ռազմատենչ հռետորաբանությունն ու պատերազմի սպառնալիքները սաստկացել են, բազմապատկվել եւ առավել վտանգավոր են դարձել զինադադարի ռեժիմի խախտումները, որոնք շարունակում են բազմաթիվ անմեղ մարդկանց կյանքեր խլել»:

ՀՀ Ազգային ժողովի նախագահի հավաստմամբ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը պետք է լիիրավ կողմ հանդիսանա տարվող հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններում եւ ձեռք բերված յուրաքանչյուր պայմանավորվածություն պետք է արժանանա Արցախի ժողովրդի հավանությանը. «Հայաստանի Հանրապետությունը կարեւորում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությունը՝ որպես բանակցային գործընթացի գործուն ձեւաչափ, որը կարգավորման ուղիներ գտնելու լուրջ ներուժ ունի: Ռազմական ճանապարհով հակամարտության կարգավորման յուրաքանչյուր փորձ անկանխատեսելի հետեւանքներ կարող է ունենալ ոչ միայն հակամարտության կողմերի, այլեւ ողջ տարածաշրջանի համար: Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է խնդրի կարգավորմանը միայն խաղաղ ճանապարհով եւ կարեւորում է վստահության մթնոլորտի հաստատումը բանակցությունները կառուցողական ուղիով շարունակելու համար: Ադրբեջանին կոչ ենք անում զերծ մնալ որեւէ քայլից, որը կարող է հավելյալ լարվածություն ու խոչընդոտներ ստեղծել խաղաղ գործընթացի ճանապարհին»:

Միջխորհրդարանական համատեղ նիստին ներկա էր նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահ, դեսպան Վլադիմիր Կազիմիրովը, ով նույնպես հանդես եկավ ելույթով: Անդրադառնալով զինադադարի մասին համաձայնագրի ստորագրման պատմությանը՝ Վ. Կազիմիրովը հանգամանալից ներկայացրեց 1994թ. մայիսին ստորագրված փաստաթղթերի դրույթները եւ կարեւորեց տարածաշրջանում խաղաղության եւ կայունության ամրապնդման անհրաժեշտությունը:

Անի ԱՉԱՏՅԱՆ

Նոր էրքեջում զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշարձան բացվեց

Արցախի Շահումյանի շրջանի Նոր Էրքեջ գյուղում օրերս բացվեց էրքեջցի զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշարձան:

22 տարի առաջ նախկին Շահումյանի շրջանի Էրքեջ գյուղի բռնազավթումից հետո պատմական Վայկունիքում (Քարվաճառ) հիմնադրված Նոր Էրքեջ գյուղում էրքեջցիները ապրում են հույսով, որ կրկին կվերադառնան իրենց հայրենի գյուղ, իրենց հայրենի տներ: Սակայն էրքեջցիները իրենց նոր գյուղում կառուցում են նոր տներ ու վառ պահում հայրենի հողի համար մղված պայքարում ընկած իրենց համագյուղացիների հիշատակը:

Ինչպես էրքեջցիներն են ասում՝ նորակառույց հուշարձանը կոչված է վառ պահելու զոհված ազատամարտիկների հիշատակը, որպեզի նրանց սխրանքը չմոռացվի: Հուշարձանը յուրօրինակ ձեւով կապում է գյուղի անցյալն ու ներկան:

Էրքերցի զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշարձանի բացման արարողությանը ներկա էին նաեւ ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի անդամները:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը չի կարող անդամակցել մի կազմակերպության, եթե դա վնասելու է Արցախին

Արցախ-Հայաստան միջխորհրդարանական նիստից հետո, որն անցավ փակ դռների ներսում, ԼՂՀ եւ ՀՀ ԱԺ նախագահները հանդես եկան մամուլի ասուլիսով: Չնայած օրակարգում նախատեսված էր, որ նիստից հետո պետք է նաեւ ներկայացվեր համատեղ հայտարարություն, բայց քանի որ քննարկումները բուռն էին եղել եւ դեռ հստակեցնելու հարցեր էին մնացել, այդ իսկ պատճառով հայտարարություն չներկայացվեց լրատվամիջոցներին: Հայկական երկու հանրապետությունների խորհրդարանների ղեկավարները հավաստիացրին, որ առաջիկա երկու-երեք օրերի ընթացքում համատեղ հայտարարությունը կներկայացվի հանրությանը:

Լրագրողները ՀՀ ԱԺ նախագահից փորձեցին տեղեկանալ՝ ունենք արդյոք տարածքներ, որոնք պետք է հանձնենք, քանզի ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիքի կողմից հնչեցված բանակցային 6 կետերից մեկի համաձայն՝ նախատեսվում է տարածքների հանձնում:

ՀՀ խորհրդարանի նախագահ Գալուստ Սահակյանը պատասխանեց. «Այդ 6 կետերը ոչ թե ընդունված կետեր են, այլ առաջարկված կետեր են, որը քննարկումների շրջանակներում է: Մեր ժողովուրդը եւ քաղաքական գործիչները մեր պետական տեսակետը գիտեն այդ կետերի նկատմամբ, որի հիմնական մոտեցումը ազգերի ինքնորոշման իրավունքն է: Հայաստանյան կողմի բանակցությունները գնում են այդ ճանապարհով: 6 կետերը, որոնք տարբեր մոտեցումներ են առաջադրում իրենց մեջ, բնականաբար մեզ համար քննարկելի են, բայց ոչ վերջնական ընդունելի այն տեսքով, ինչ տեսքով դրանք կան»:

ԼՂՀ Խորհրդարանի խոսնակն էլ իր տեսակետը ներկայացրեց հարցի վերաբերյալ. «Տարածքների հետ կապված հարցը նորություն չէ, դա ղարաբաղյան հակամարտության հետեւանքների խմբից է: ԼՂՀ ապագա կարգավիճակը միջազգայնորեն ճանաչվելուց հետո հնարավոր կլինի խոսել կոնֆլիկտի հետեւանքների մասին: Տարածքների մասին ընդհանրապես չխոսել, կարծում եմ, ճիշտ չէ, որովհետեւ բոլորդ գիտեք, որ մենք էլ ունենք տարածքներ եւ պետք է իմանանաք այդ տարածքների, այդ թվում՝ Ադրբեջանի օկուպացիայի տակ գտնվող տարածքների ճակատագիրը: Դա էլ մեզ է հուզում: Այսինքն, կա ընդհանուր թեմա, իսկ թե ինչքանով կարող ենք մեր շահերը համադրել, դա արդեն ցույց է տալու բանակցային գործընթացը»:

Լրագրողներին հետաքրքրում էր այն հարցը, որ Արցախում սահմանների հստակեցման խնդիր ունեն Ադրբեջանի Հանրապետության հետ, եւ արդյոք նման խնդիր չի առաջանալու ՀՀ-ի հետ, երբ Հայաստանը անդամակցի Եվրասիական միությանը եւ Մաքսային միությանը: Հարցին միանգամից պատասխանեց ԼՂՀ ԱԺ նախագահը. «Իհարկե ոչ»: Իսկ ՀՀ ԱԺ նախագահի պատասխանն այսպիսինն էր. «Մենք սկսելու ենք արդեն ինքներս մեզ կասկածել: Մենք ամբողջական ենք, միասին, որեւէ կիսելու խնդիր չունենք, մենք ընդամենը պետք է պայքարենք եւ հասնենք խնդրի լուծմանը: Իրավական տեսակետից՝ Ղարաբաղը պիտի ճանաչվի ինքնորոշման իրավունքի շրջանակներում: Մենք այս խնդիրն ենք լուծում: Մենք մեկ ենք, նույն ազգն ենք: Որոշ դեպքերում ասում եմ՝ հայերը կարող են երեք կամ չորս պետություն ունենալ, բայց ունենալ մեկ պետականություն»:

Այն հարցին, թե ինչ վտանգներ են սպասվում Արցախին Հայաստանի Եվրասիական Միությանն անդամակցելու պարագայում, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Ադրբեջանի անդամակցությունը նույն կազմակերպությանը չի բացառվում:

«Հայաստանը չի կարող երբեւիցէ անդամակցել մի կազմակերպության, եթե դա վնաս կարող է բերել Ղարաբաղին: Քսաներկու տարուց ավել է՝ ինչ մենք պայքարում ենք այս խնդրի շուրջ, մենք այդ պայքարի մարտիկներն ենք եւ երբեք որեւէ մի թիմ, նույնիսկ այն թիմերը, որոնք իրար հետ հակամարտում են եւ նույնիսկ եթե իշխանության գան, Ղարաբաղի խնդիրը նույնն է մնալու: Հայաստանը որեւէ համագործակցություն չի կարող ունենալ որեւէ կազմակերպության հետ, եթե այն կվնասի Ղարաբաղին»,- նշել է ՀՀ ԱԺ խորհրդարանի ղեկավարը:

Արցախ-Հայաստան միջխորհրդարանական հաջորդ նիստը տեղի կունենա Երեւանում:

Անի ԱՉԱՏՅԱՆ

ՀՅԴ Բյուրոյի հայտարարությունը Հալեպում հակահայ արարքների վերաբերյալ

Հայ Յեղափոխական Դաշնակցության Բյուրոն դատապարտում է Հալեպի հայաբնակ թաղամասերի վրա հետզհետե ուժգնացող հարձակումները: Արդեն կասկած չի մնում, որ Սիրիայի իշխանություններին իբրեւ ընդդիմութուն հանդես եկող ուժերի թիրախը բացառապես հայաբնակ թաղամասերն են:

Կան փաստեր, որ Հալեպի հայաբնակ թաղամասերի վրա սաստկացած հարձակումները խրախուսվում են, հատկապես, Թուրքիայի կողմից:

Դիմում ենք ընդդիմադիր այդ ուժերի վրա ազդեցություն ունեցող բոլոր, հատկապես, Արեւմտյան պետություններին՝ անմիջապես իրենց լծակները օգտագործելով դադարեցնել հայաբնակ թաղամասերի վրա հարձակումները: Հակահայ հարձակումների եւ գործած ոճրագործության մեղսակից կհամարվեն հովանավորող բոլոր այն պետությունները, որոնք այդ արարքների դեմը չեն առնի:

Կոչ ենք անում Սիրիայի իշխանություններին, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ հատկապես քրիստոնյա ազգային փոքրամասնությունների ֆիզիկական անվտանգությունն ապահովելու համար:

Կոչ ենք անում նաեւ համայն հայությանը՝ հնարավոր բոլոր միջոցներով սատարել հակահայ արարքների դադարեցմանն ուղղված ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների նախաձեռնություններին:

ՀՅԴ ԲՅՈՒՐՈ
04.06.2014թ.

Մոսուլի գրավումից հետո 65 հայ ընտանիքներ գաղթական դարձան

«Ալ-Քաիդա»-ի հետ կապված Իրաքի եւ Շամի իսլամական պետության (ՏԱՀԵՇ) զինյալները քառօրյա բախումներից հետո գրավեցին Իրաքի երկրորդ մեծագույն քաղաք Մոսուլը: Նինվեի նահանգապետը հաստատեց, որ իրաքյան բանակը հեռացել է քաղաքից, եւ այն ամբողջությամբ անցել է ՏԱՀԵՇ-ի վերահսկողության տակ: ՏԱՀԵՇ-ի զինյալներին հաջողվել էր գրավել քաղաքային օդանավակայանը, նահանգապետարանը եւ ոստիկանության շենքը, իսկ «Կահիրե» կենտրոնը վառել են: Նրանք նաեւ կողոպել են քաղաքի բանկերը: ՏԱՀԵՇ-ը նաեւ ազատ է արձակել Մոսուլի տարբեր բանտերի մոտ 2400 բանտարկյալների: Իրաքի կառավարական ուժերն ու քրդական Փեշմերկաները շարունակում են կռվել զինյալների դեմ:

Տեղի ազգաբնակչությունը, այդ թվում՝ 65 հայ ընտանիքներ հարկադրված են եղել հեռանալ այդ շրջանից: Այդ մասին «Ազդակ»-ին փոխանցեց Իրաքի ազգային իշխանության պատասխանատուներից Պարույր Հակոբյանը: Նրա հավաստմամբ՝ հայության շրջանում մարդկային կորուստներ չկան:

Այս լուրը հաստատեցին Իրաքում Հայաստանի դեսպանությունում՝ նշելով, որ ներկա դրությամբ հավելյալ տեղեկություն չունեն նրանց մասին:

Որպես հայ ընտանիքների տեղափոխման հնարավոր վայր՝ դեսպանությունում նշեցին Էրբիլը՝ քիչ հավանական համարելով Բաղդադ տեղափոխումը:

Հայաստանի արտգործնախարարությունում հաստատեցին Մոսուլից հայ ընտանիքների հեռանալու լուրը՝ ընդգծելով, որ այս պահին հեռացած ընտանիքների թվի վերաբերյալ հստակ տեղեկություն չկա:

Ոչ Իրաքում Հայաստանի դեսպանությունը, ոչ էլ ՀՀ ԱԳՆ-ն հստակ տեղեկություն չունեն Մոսուլի հայության ու նրանց ճակատագրի մասին, մինչդեռ դա պետք է լիներ իրենց հիմնական գործառույթներից մեկը: Դեսպանության դերակատարությունը կայանում է հենց նրանում, որ, ի թիվս այլ հարցերի, այն պետք է նաեւ պաշտպանի տվյալ երկրում բնակվող ազգությամբ հայ քաղաքացիների շահերն ու իրավունքները:

Մոսուլը գրաված գրոհայինների խմբավորումը հարձակվել է նաեւ Մոսուլի հայկական Սբ. Էջմիածին եկեղեցու վրա. այս մասին հայտնում է Asbarez-ը:

ՏԱՀԵՇ-ի զինյալ գրոհայինները հայտնել են Բաղդադ ներխուժելու հավանականության մասին, սակայն իրաքյան ուժերին հաջողվել է կանխել նրանց առաջընթացը դեպի Բաղդադ:

Նինվե նահանգի եւ Մոսուլ քաղաքին կից Քերքուք, Սալահեդտին եւ Անպար նահանգներում ապահովական ուժերը առավելագույնս պատրաստ վիճակի բերեցին՝ ՏԱՀԵՇ-ի զինյալների ներթափանցումը կանխարգելելու համար:

Մոսուլի գրավումից հետո իրաքյան կառավարությունը երկրում ընդհանուր զորակոչ եւ զինյալ ուժերի հատուկ իրավիճակ հայտարարեց: Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին խորհրդարանին կոչ է արել արտակարգ դրության ռեժիմ մտցնել:

Քեսաբն ամբողջությամբ ազատագրված է

Սիրիական բանակն ու պաշտպանական ջոկատներն ազատագրել են Քեսաբը: Այս մասին հաղորդում է «Գանձասար» շաբաթաթերթի ֆեյսբուքյան էջը: Ըստ տեղեկատվության աղբյուրի՝ Քեսաբը վերագտել է իր խաղաղությունը, երբ շրջանի մեջ սիրիական բանակի առաջխաղացումն անցնող օրերին ավելի լայն ծավալ է ստացել ու հունիսի 14-ի երեկոյան սիրիական բանակի առաջապահ ստորաբաժանումները մուտք են գործել Քեսաբի կենտրոն, հասել մինչեւ հրապարակ, որտեղ էլ բարձրացրել են սիրիական դրոշը:

Քեսաբն ամբողջությամբ է ազատագրվել, իսկ Թուրքիայի հետ սահմանակետը այժմ գտնվում է սիրիական բանակի հսկողության տակ:

Սիրիական բանակը, նահանջի մղելով ահաբեկչական զինյալ խմբավորումներին, ոչնչացրել է նրանց ռազմամթերքի մեծ մասը:

Սիրիական պետական հեռուստաալիքն էլ հաղորդել է, որ բանակի ականազերծման մասնագետների խումբն արդեն սկսել է Քեսաբի եւ շրջակա բնակավայրերի մեջ ահաբեկիչների տեղադրած ականների եւ այլ լարված պայթուցիկ սարքերի չեզոքացման աշխատանքները:

Նահանջող ահաբեկչական զինյալ խմբավորումների դիմաց թուրքական սահմանապահ ուժերը փակել են սահմանը, սակայն լիբանանյան «Ալ Մայատին» կայանի տեղեկությունների համաձայն՝ թուրքական կողմը միայն օտարերկրացի զինյալ ահաբեկիչներին է թույլատրել փախչել դեպի Իսկենտերոն, որտեղից նրանք պետք է ուղղվեն իրենց երկրներ:

Ծովափի շտապ օգնության մարմնի բանբեր Կարո Մանճիկյանը հայտնել է, որ Քեսաբ մեկնած տեղացիները հաստատել են, որ ավանի բնակարանները, հաստատություններն ու հողագործական սարքերը թալանված են: Լուրջ վնասներ են կրել եկեղեցիներն ու մշակութային կենտրոնները:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հալեպահայությունը կործանման վտանգի մեջ է

Հունիսի 4-ին Հալեպի լրատվական գրասենյակը հաղորդագրություն է տարածել «Նոր Գյուղն ու հալեպահայությունը կործանման վտանգի մեջ են» խորագրով:

Հաղորդագրության համաձայն՝ հայաբնակ Նոր Գյուղի շրջանն այլեւս աղետի գոտի է: Հալեպահայությունը համայն հայությանն ուղղված կոչով է հանդես եկել, որում հալեպահայությունը դիմում է համայն հայությանը, որպեսզի բոլոր հնարավոր միջոցներով նպաստեն հայկական թաղամասի անմարդկային հրթիռակոծության կասեցման եւ աղետահար ժողովրդի ֆիզիկական անվտանգության ապահովման համար:

Հալեպահայության կոչը գրավոր եւ վիդեո տարբերակներով արդեն իսկ տարածվել է համացանցում: Այն ուղարկվել է հայկական աշխարհասփյուռ բոլոր կառույցներին, եւ արդեն թարգմանված հրապարկվում է տարբեր լեզուներով:

«Հունիս ամսվա առաջին իսկ օրերից, ահաբեկիչ խմբավորումների կողմից, որոնց մեծ մասը թուրք կամ թրքամետ արմատական ահաբեկչական խմբեր են, խաղաղ բնակչության վրա արձակվում են տարբեր տեսակի կործանարար հրթիռներ եւ հրասանդներ: Հատկապես հայերով բնակեցված Նոր Գյուղի շրջանի մեջ ընկած հրթիռները մարդկային վնասների կողքին նյութական սարսափելի վնասներ են պատճառել: Հարյուրավոր հայ ընտանիքներ ստիպողաբար լքել են իրենց տները, ոմանք քաղաքից հեռացել են եւ փորձել ապաստան գտնել Լաթաքիա քաղաքում, ոմանք տեղափոխվել են Հալեպի այլ շրջաններում բնակվող իրենց հարազատների բնակարանները, ոմանք այլ բնակարան տեղափոխվելու հնարավորություն չունենալով՝ ապաստան են գտել Նոր Գյուղի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

Հսկայական վնասներ են կրել Նոր Գյուղի հայկական կառույցները՝ Ազգային Կարեն Եփփե Ճեմարանը, Ազգային Զավարյան Վարժարանը, Ազգային Սահակյան Վարժարանը, Ազգային Հայկազյան Մանկապարտեզը, Ազգային Սահակյան Մանկապարտեզը, Ազգային Զավարյան Մանկապարտեզը, Կաթողիկե համայնքին պատկանող մեկ դպրոց՝ Զվարթնոց Վարժարանը, Հայ Առաքելական Ս.Գրիգոր Լուսավորիչ եւ Հայ Կաթողիկե Ս.Երրորդություն եկեղեցիները, «Արեւելք» տպարանը, Սիրիահայ Օգնութեան Խաչի ընկերաբժշկական կենտրոնը, Ազգային պատսպարանը, Երիտասարդական Գրախանութը, ազգապատկան Կիլիկիա, Օշական, Նայիրի, Արցախ եւ Սիս բնակարանային շենքերը եւ խանութները: Զգալի վնասներ են կրել նաեւ հայերի վաճառատներն ու արհեստանոցները: Մեծաթիվ բնակարաններ ամբողջությամբ դատարկվել են, իսկ հարյուրավորները՝ բնակության համար պիտանի չեն:

Անցնող երեք օրվա ընթացքում պայթյունների հետեւանքով զոհեր եւ տասնյակի հասնող վիրավորներ կան, որոնց մեծ մասը դեռեւս հիվանդանոցներում է: Երբեմնի հայահոծ Նոր Գյուղը այսօր աղետալի շրջան է՝ ամայացած ու ավերակ: Ինչ որ տեղի է ունենում Հալեպում՝ շրջանցում է բոլոր պատկերացումներն ու ենթադրությունները. վիճակը այլեւ տանելի չէ: Այս բոլորի մեջ վատագույնն այն է, որ հալեպահայությունը միայնակ է կանգնած այս վտանգների առաջ: Հալեպահայության կրած փորձանքներն արձագանք անգամ չեն ունեցել: Անհասկանալի եւ անընդունելի ձեւով լուռ են թե՛ պաշտոնական, թե՛ հասարակական կողմերը: Նոր Գյուղն ու հալեպահայությունը կործանման վտանգի դիմաց է: Այս լրատվությունն ընդունեցեք ինչպես կցանկանաք՝ որպես կոչ, ազդագիր, լրատվագիր, թե այլ»:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը Ադրբեջանի վարած բռնաճնշումների քաղաքականության լույսի ներքո (1923-91թթ.)

Համաշխարհային պատմության շրջանակներում ժողովրդագրական գործընթացները եղել եւ մնում են տվյալ տարածքում բնակվող ազգի, էթնոսի ամենաէական անընդհատ զարգացում ապրող գործոններից մեկը, առանց որի անհնար է պատկերացում կազմել ազգի համալիր ներկայի եւ ապագա տեսլականի վերաբերյալ:

Հետեւաբար, ԼՂՀ պատմության համար նշանակալից ժամանակահատվածի (1923-91թթ.) բազմակողմանի ուսումնասիրումը չի կարող իրականացվել առանց ժողովրդագրական գործընթացների համակողմանի հետազոտման:

Վերոնշյալ փաստը առավել մեծ կարեւորություն է ստանում, եթե այն սկսում ենք դիտարկել Ադրբեջան անվանված պետության կողմից՝ մոտ 70 տարի պետական մակարդակով իրականացվող հայատյաց քաղաքականության լույսի ներքո:

Հատկանշական է այն փաստը, որ Ղարաբաղյան շարժման նախորդող եւ հաջորդող տարիներին Ադրբեջանը պետական մակարդակով օգտագործելով բոլոր հնարավոր տարբերակները՝ ԱդրԽՍՀ-ում եւ ԼՂԻՄ-ում արցախահայության դեմ իրականացնում էր էթնիկ զտման քաղաքականություն, որն էլ հանգեցրեց երկրամասի հայաթափմանը եւ ժողովրդագրական պատկերի թուրքացմանը:

Եվ եթե, անդրադարձ կատարենք ԼՂԻՄ-ի ժողովրդագրական գործընթացների պատմությանը, ապա կտեսնենք, որ Լեռնային Ղարաբաղում ԱդրԽՍՀ-ին բռնակցելուց անմիջապես հետո սկիզբ է առնում առաջինիս հայ բնակչության արտագաղթը, որը հանգեցնում է մարզի հայ բնակչության կշռի անընդհատ նվազմանը:

Արդ, երբ 1923 թվականին ձեւավորվեց ԼՂԻՄ-ը, երկրի բնակչությունը կազմում էր 157.3 հազար մարդ, որից՝ 149.6 հազար հայեր եւ 7.7 հազար ադրբեջանցիներ: Ինչպես երեւում է տվյալներից՝ հայերը կազմում էին բացարձակ մեծամասնություն: Իսկ ընդամենը մի քանի տարվա ընթացքում՝ 1921-1930թթ., հայերը թիվը 94.4 տոկոսից նվազեց՝ կազմելով 83.1 տոկոս:

Եթե նախախորհրդային ժամանակաշրջանում Ղարաբաղի բնակչության զգալի մասը (աշխատունակ, ընտանիքի հայր հանդիսացող երիտասարդ տղամարդիկ) մեկնում էին հեռավոր վայրեր՝ աշխատելու, ապա խորհրդային իշխանության, ադրբեջանական գաղութատիրության տարիներին մարզերից մեկնում էր հիմնականում չամուսնացած երիտասարդությունը՝ սոցիալ-տնտեսական տարրական պայմանների բացակայության պատճառով: Մեխանիկական շարժերի համանման տենդենցները պայմանավորեցին բնակչության «ծերացմանը» եւ դրա հետեւանքով ծնելիության մակարդակի կտրուկ նվազեցմանը եւ մահացության մակարդակի բարձրացմանը :

1939 թվականի հունվարի 17-ին մարզում անցկացվեց բնակչության հաշվառում: Հաշվառման տվյալների համաձայն՝ ԼՂԻՄ-ի ընդհանուր բնակչությունը կազմել է 150.8 հազար մարդ, որից 132.8 հազարը՝ հայեր, 14.1 հազարը՝ ադրբեջանցիներ, 3.2 հազարը՝ ռուսներ, 0.7 հազարը՝ մյուս ազգությունները:

Հաշվառման տվյալների համաձայն՝ մարզի հինգ շրջաններից ադրբեջանցիները մեծամասնություն են կազմել միայն Շուշիի շրջանում: 1939 թվականին Շուշիի շրջանի բնակչությունը կազմել է 10818 մարդ, որից՝ ադրբեջանցիներ՝ 6306 մարդ կամ 58.3 տոկոս եւ հայեր՝ 4177 մարդ կամ 38.6 տոկոս: Ընդ որում, ադրբեջանցիներից շատերը ապրել են Շուշի քաղաքում, որի բնակչությունը 5424 մարդ էր, իսկ շրջանի գյուղական վայրերում հայերը կազմել են մեծամասնություն:

Արցախահայությունը մեծ կորուստներ ունեցավ նաեւ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Համեմատելու համար նշենք, որ միայն ԼՂԻՄ-ից մոբիլիզացվեց եւ ռազմաճակատ ուղարկվեց 45 հազար ղարաբաղցի /կամ բնակչության 32 տոկոսը/. դա այն դեպքում, երբ ռազմաճակատ ուղարկված ադրբեջանցիների թիվը կազմել է ընդամենը 0.3 տոկոս, չնայած ընդհանուր թվաքանակում կազմում էին մարզի բնակչության 10 տոկոսը:

Ուշագրավ է նաեւ այն փաստը, որ 1939-1979 թվականներին, բավականին բարձր բնական աճի պայմաններում մարզի հայ բնակչությունը կրճատվել է մոտավորապես 10 հազարով: 1926-1979 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում ԼՂԻՄ-ում հայկական բնակչությունն աճել է ընդամենը 10.2 տոկոսով, իսկ ադրբեջանականը՝ համարյա 3 անգամ ավելին. դա այն դեպքում, որ 1926 թվականին հայերը կազմել են 89.1 տոկոս, իսկ ադրբեջանցիները՝ 10.1 տոկոս: Այդպիսի արդյունքները մարզից հայ բնակչության արտահոսքի եւ ադրբեջանցիների մշտական հոսքի հետեւանքներն էին: Բնակչության թվաքանակի եւ կազմի նմանօրինակ փոփոխությունները շարունակվեցին նաեւ հետագա տարիներին՝ ընդհուպ մինչեւ 1988 թվականը:

1989 թվականի հունվարի 12-ին ԼՂԻՄ-ում անցկացվեց բնակչության մարդահամար:

Մարդահամարի տվյալներով՝ մարզի բնակչությունը կազմել է 189.1 հազար մարդ, որից 145.5 հազարը կամ 76.9 տոկոսը հայեր էին, 40.7 հազարը կամ 21.5 տոկոսը՝ ադրբեջանցիներ, 1.9 հազարը կամ 1.0 տոկոսը՝ ռուսներ եւ 1.0 հազարը կամ 0.5 տոկոսը կազմել են այլ ազգերի ներկայացուցիչներ: Ինչպես երեւում է տվյալներից՝ տասը տարվա ընթացքում (1979-1989 թթ. մարդահամարների ընթացքում) մարզի բնակչությունն աճել է 16.9 հազարով: Բարձրացավ նաեւ հայ բնակչության տեսակարար կշիռը՝ 1979 թվականին-123.1 հազար մարդ, 1989թ՝ 145.5 հազար: Դա 1988 թվականի Սումգայիթյան եւ նրան հաջորդած դեպքերի հետեւանքով էր: Ադրբեջանական հայաշատ վայրերից փախստական հայերի որոշ խումբ բնակություն հաստատեց ԼՂԻՄ-ում՝ իր նախկին բնակավայրերում:

Հասկանալի է նաեւ այն պարզ իրողությունը, որ «հայկական հատվածը» Ադր.ԽՍՀ եւ Ադրբեջանական Հանրապետության բնակչության միակ հատվածը չէ, որի հաշվին տասնամյակներ շարունակ իրականացվել է հանրապետության բնակչության «թուրքացման» քաղաքականությունը: Այս առումով հատկանշական է Ադր.ԽՍՀ եւ Ադրբեջանական Հանրապետության թալիշների մասին պաշտոնական տվյալների պատմությունը:

1989 թվականի մարդահամարն անցկացվել է ղարաբաղյան հակամարտությունը սկսվելուց մեկ տարի անց՝ Սումգայիթում, Կիրովաբադ-Գյանջայում եւ այլ բնակավայրերում հայկական ջարդերից հետո, ջարդեր, որոնք սադրել են հայերի զանգվածային հեռացումը Ադրբեջանից: Ուստի, չի կարելի ճշգրիտ համարել այդ հաշվառման արդյունքները, որոնցում նշված են 390.505 հայեր Ադրբեջանում: Սա են վկայում նաեւ ադրբեջանական աղբյուրները: Ուշագրավ է, որ «խաղաղ» 1979 թվականին մարդահամարն Ադրբեջանում «հայտնաբերել է» 475.486 հայեր:

Սակայն, արդարացի կլինի նշել, որ Ղարաբաղյան շարժման, ԽՍՀՄ-ի փլուզման, Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից հրահրված պատերազմի, ԼՂՀ-ի հռչակման հետեւանքով երկրում ստեղծված միգրացիոն անվերահսկելի տեղաշարժերի, քաղաքական, սոցիալ տնտեսական անկայուն պայմաններում 1989թ. Լեռնային Ղարաբաղում անցկացված վերջին մարդահամարի արդյունքները օբյեկտիվ պատճառներով շատ շուտ կորցրեցին իրենց արդիականությունը, եւ, բնականաբար, չէին կարող արտահայտել ժողովրդագրական պատկերի ճշմարտացիությունը:

Այսպիսով, Խորհրդային Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի գտնվելու տարիներին ադրբեջանական բնակչության տոկոսը 4,9-ից հասել է 21,5-ի (աճի տեմպը՝ 484 տոկոս), իսկ հայ ազգաբնակչության տոկոսը 94,8-ից կրճատվել է 76,9-ի11:

Անառարկելի է նաեւ այն հանգամանքը, որ եթե Ադրբեջանի գաղութային քաղաքականության հետեւանքով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքներն ամենուրեք չոտնահարվեին, նրանք ստիպված չլինեին հեռանալ հայրենիքից, ապա ԼՂԻՄ-ի հայ բնակչության թիվը արդեն 1989թ. 189,1 հազարի փոխարեն կկազմեր շուրջ 500 հազար մարդ:

Ցավով պետք է նկատել, որ 90-ական թվականներին բնակչության արտաքին միգրացիոն տեղաշարժերի մի մասը, գրանցման համակարգի տեսադաշտից դուրս մնալով, խեղաթյուրել է ժողովրդագրական ցուցանիշների հաշվառումը եւ վերլուծությունը:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ Ադրբեջանի վարած էթնիկ զտումների քաղաքականությունը, ռազմական գործողությունները եւ սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացումը մեծ հետք թողեցին բնակչության ընդհանուր եւ ծննդի մակարդակի, բնակչության տարիքային կազմում տեղի ունեցող տեղաշարժերի վրա:

Դա հանգեցրեց սոցիալ-տնտեսական նոր պայմանների վերաճմանն ու վատթարացմանը եւ բնակչության «ծերացմանը»: Բանն այն է, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության զարգացման օրինաչափությունները ձեւավորող գործոնների դերը, դրանց բնույթի փոփոխության եւ մի շարք նոր գործոնների ձեւավորման ընթացքը, մասնավորապես շրջափակումները, Արցախի ողջ տարածքում լայնամասշտաբ պատերազմական գործողությունները, տնտեսական ու էներգետիկ ճգնաժամը, անժամանակ մասնավորեցումները, հապշտապ սեփականաշնորհումները, եւ մեծ չափեր ստացած պարտադրված արտագաղթը հանգեցրին բնակչության ընդհանուր թվաքանակի եւ ծննդի նվազմանը:

Սարգիս ԱՍԱՏՐՅԱՆ

Պետականության կերտման նախադրյալները

Հարյուրամյակներ շարունակ հայ ժողովրդի խնդիրն է եղել պետականության վերականգնումը:

Կիլիկյան թագավորության անկումից հետո հայ ազգի գաղափարախոսական հիմնասյունը պետականության վերականգնումն էր: 20-րդ դարասկզբին եւ ընթացքում այն վերաիմաստավորվեց, եւ այդ վերաիմաստավորման արդյունքը եղավ ոչ միայն պետականության վերականգնումը, այլեւ տարածքային վերամիավորման գաղափարը. վառ օրինակը Արցախյան շարժումն էր, որը գաղափարական դաշտի զարգացման հե- տեւանքն էր:

Այսօր արդեն երկու տասնամյակ է՝ ինչ ունենք անկախ պետականություն, սակայն համատարած անարդարությունների, նյութապաշտության խորացման հետեւանքով իմաստազրկվում է «պետություն» հասկացությունը: Ավելին, ազգի մտածելակերպի մեջ Արցախի վերամիավորման գաղափարը խեղաթյուրվում է եւ ըստ էության այլասերվում:

Ներկայիս գաղափարախոսական դաշտը գտնվում է ծանր վիճակում: Պատմությունը ցույց է տալիս, որ մեր ազգը հզորացել ու հասել է բարձունքների այն ժամանակ, երբ հո- գեւոր-քաղաքական վերնախավն ունեցել է ազգային առաքելություն: Հայկական բոլոր պետականություններն իրենց համաշխարհային նշանակությունն ու դերն են ունեցել այն ժամանակ, երբ քաղաքական ու հոգեւոր վերնախավը ձեւավորել է գաղափարական հստակ համակարգ թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականության ոլորտներում:

Այսօր մենք ունենք պետականություն, սակայն չունենալով իրական ինստիտուտներ, որոնք պետք է մշակեն երկրի քաղաքական ու գաղափարական դոկտրինան, այն հասցրել են թուլացման շեմին: Մեր հայրենիքում համարյա չի գործում գաղափարաստեղծ քաղաքական էլիտա, չկան քաղաքական գործընթացներ, չկա քաղաքական հասունություն թե՛ ընդդիմություն ներկայացնողների, թե՛ հատկապես իշխանական վերնախավում: Կան միայն պետական սահմաններ, այդ պետությունից խաբված ու հիասթափված ժողովուրդ: Այս աղետալի վիճակի միակ պատասխանատուն, գտնում եմ, ներկայիս իշխանական համակարգն է:

Նախ՝ պետք է հասկանալ ու գիտակցել, թե, ասենք օրինակ, Առաջին հանրապետության ժամանակ քաղաքական վերնախավի համար ինչ արժեք է ներկայացրել հայոց պետականությունն ու հայ ազգը: Ամբողջ խնդիրը պաշտոնյայի, նախագահի կամ նախարարի՝ այդ պաշտոնը վարելու շարժառիթն է եւ իշխանության վերարտադրությունը: Եթե այն գաղափարական է, ապա ամեն ինչ կստացվի լավ եւ արագ, իսկ եթե հիմնված է նյութական հիմքերի վրա, երբեք ոչինչ չի ստացվի:

Մեր պետությունը ոտքի կկանգնի այն դեպքում, երբ երկրի ղեկավարը կղեկավարի՝ հիմվելով ազգի դարավոր իմաստության վրա: Այդ դեպքում ազգն իր հերթին չի արհամարհի իշխանություններին ու չի լքի հայրենիքը: Կստեղծվի համազգային նոր գաղափար՝ աշխարհաքաղաքական հզոր երկիր դառնալու, հայկական ժամանակակից քաղաքակրթություն եւ նոր արժեհամակարգ ձեւավորելու նպատակադրմամբ: Իսկ այդ նոր գաղափարախոսության հիմքում ընկած է լինելու ժողովուրդը: Ինչքան կազմակերպված լինի հայ ժողովուրդը, լինի դա Արցախում, Հայաստանում, թե Սփյուռքում, այնքան հզոր է լինելու հայրենիքը: Հետեւաբար, մենք պետք է գործնական քայլերի լծվենք՝ տեր կանգնելով ու շենացնելով մեր հողերը, որի համար մեծ ապավեն է սփյուռքը:

Պետք է խուսափենք ներքին վեճերից եւ պառակտումներից, որոնք ջլատում են մեր ուժերը, իսկ այս ամենի իրականացման կենտրոնում պետք է պահենք մեր երիտասարդությանը, որպեսզի չմոլորվեն եւ հոռի բարքերից հեռու մնան: Երիտասարդությունն է մեր ապագան, եւ անհրաժեշտ է հայեցի դաստիարակություն ներարկել նրանց մեջ: Իսկ նրանց դաստիարակման գործի համար պետք է ամուր հիմքերի վրա պահենք դպրոցներն ու համալսարանները, եկեղեցին ու հասարակական հաստատությունները: Մեր երեխաներին պետք է ոչ միայն եռագույն շորեր հագցնելով դաստիարակենք, այլ եռա- գույնը ձեւավորենք նրանց հոգում:

Միասնականության շնորհիվ է, որ այսօր ունենք պետականություն, բայց պետք է սովորենք նաեւ այն պահել: Մեր միասնականության շնորհիվ է, որ այսօր ունենք ազատագրված Արցախ: Այսօր արցախյան հասարակությունը պետք է նույնիսկ ենթագիտակցորեն բացառի հակամարտության բանակցային լուծման տարբերակը: Պետք է ցույց տալ բոլորին, որ բանակցային գործընթացը վիրտուալ ռեալություն է եւ որեւէ առընչություն չունի Արցախի ապագան կանխորոշող իրականության հետ: Այդ իրականության հետ ամենաուղղակի կապ ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են արդյունավետ վերաբնակեցման քաղաքականությունը, հզոր տնտեսությունը եւ հայ զինվորի բազկի զորությունը:

Մեր պետականության հզորացման եզակի հնարավորությունն է հայկական հարցի լուծումը, որը հայ ժողովրդի հարատեւման միակ ուղին է:

Ալյոնա ԴԱԴԱՄՅԱՆ

Նիդեռլանդների խորհրդարանականները թուրքերի ցույցի կապակցությամբ դիմել են կառավարությանը

Նիդեռլանդների խորհրդարանի մի խումբ պատգամավորներ դիմել են կառավարությանը, որպեսզի պարզաբանում պահանջեն թուրքական կառավարությունից՝ հունիսի 1-ին Ալմելոյում թուրքերի ցույցի առնչությամբ, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի՝ նույն քաղաքում կանգնեցված հուշարձանի դեմ:

Քրիստոնյա դեմոկրատների, Սոցիալիստական կուսակցության, Քրիստոնյա միության, Ազատության կուսակցության եւ Բարեփոխված կուսակցության կարծիքով՝ կառավարությունը պետք է բողոքարկի այդ ցույցի դեմ, որին, ըստ երեւույթին, աջակցել էր թուրքական կառավարությունը:

Ալմելոյում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը կանգնեցվել է այս տարվա ապրիլին:

Անցյալ կիրակի Ալմելոյի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձանի մոտ հավաքված թուրք ցուցարարները հնչեցնում էին նաեւ «Ղարաբաղը հայերի գերեզմանը պիտի լինի» կոչեր: Օսմանական տարազներով նվագախումբը հնչեցրել էր թուրքական զինվորական երաժշտություն: Սա պրովոկացիա է հայերի նկատմամբ, որովհետեւ 1915 թ. հայերի զանգվածային ջարդերը տեղի ունեցան օսմանյան ռեժիմի օրոք:

Ըստ շրջանառվող լուրերի՝ թուրքական գլխավոր հյուպատոսարանը եւ զանազան մզկիթներ մասնակցել են այս ցույցի կազմակերպական աշխատանքներին:

Խորհրդարանականները պահանջում են, որ արտաքին գործերի նախարար Ֆրանս Թիմմրմանը հարցը բարցրացնի իր թուրք գործընկերոջ մոտ եւ Նիդեռլանդներում թուրքական դեսպանատանը:

Արդարադատության նախարար Իֆո Օփսթելտեն պահանջեց, որ գործնական քայլեր արվեն ցուցարարների՝ ատելություն սերմանող կոչերի դեմ:

Խորհրդարանականները նաեւ որոշակի քայլերի են սպասում Ինդեկրացիայի պատասխանատու նախարար Լոտվայք Աշշերից:

3 նախարարներից եւ կառավարությունից պահանջվում է՝ չընդունել այդ ցույցի ոգին եւ դատապարտել այնտեղ հնչած կոչերը:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՅԴ Հունաստանի երիտասարդական միության նախաձեռնությունը խանգարեց Աթենքում ադրբեջանական համերգի կազմակերպմանը

Ջուղայի հայկական գերեզմանատան դեմ ադրբեջանցիների բարբարոսությունը ցույց տվող թռուցիկներ են բաժանել Աթենքի համերգասրահ մուտք գործող բոլոր հրավիրյալներին, այդ թվում՝ օտար դիվանագիտական, գործարարական ու հասարակական միությունների շրջանակների ներկայացուցիչների:

Ադրբեջանի քարոզչությունը հույն հասարակության շրջանակներում տարածելու համար՝ վերջերս որոշ մշակութային բնույթի ձեռնարկներ են կազմակերպվում Հունաստանում Ադրբեջանի դեսպանությունում, կամ դրան կից գործող միությունների կողմից:

Այս միջոցառումների շրջանակներում հունիսի 6-ին Աթենքի համերգասրահներից մեկում տեղի ունեցավ ադրբեջանական դասական երաժշտության համերգ, որին հրավիրված էին օտար դիվանագետներ եւ հույն գործարարական ու հասարակական միության շրջանակներ: Նշենք, որ կազմակերպված մեծածախս համերգի մուտքն ազատ էր ժողովրդի համար:

Հույն հասարակության շրջանակներում ադրբեջանական ագրեսիվ քաղաքականությունը եւ բարբարոսական արարքները բացահայտելու նպատակով՝ ՀՅԴ Երիտասարդական միության անդամները հավաքվեցին Աթենքի համերգասրահի մուտքի մոտ՝ միջոցառմանը ներկա գտնվող հույն հասարակությանը բաժանելով թռուցիկներ, որտեղ ներկայացված էր Ջուղայի հայկական գերեզմանատան բնաջնջման բարբարոսությունը:

Երիտասարդներն ավելի քան 1000 թռուցիկ բաժանեցին: Քիչ անց ադրբեջանցի պաշտոնատար անձինք, նկատելով այդ, դուրս եկան համերգասրահից՝ անվտանգության ուժերի ընկերակցությամբ պահանջելով դադարեցնել թռուցիկների բաժանումը եւ հայ երիտասարդների հեռացումը: Այսուհանդերձ, ՀՅԴ Երիտասարդական միության անդամները մերժեցին հեռանալ կամ դադարեցնել ցրումը՝ նույնիսկ երբ վրա հասան ոստիկանական եւ անվտանգության հատուկ ջոկատները՝ բացատրելով, որ խաղաղ նախաձեռնություն են իրագործում՝ ժողովրդին տեղյակ պահելու համար, թե ում կազմակերպած համերգն են լսելու եկել:

Ոստիկանական ուժերը հետզհետե խստացրին իրենց կեցվածքը՝ դիմելով ձերբակալության եւ փորձելով սպառնալ ու հեռացնել երիտասարդներին:

ՀՅԴ Երիտասարդական միության անդամների նախաձեռնությունը հասավ իր նպատակին՝ հույն եւ օտար շրջանակներում բացահայտորեն ներկայացնելով Ադրբեջանի իսկական դեմքը, երբ ինքն իրեն ներկայացնում է որպես մշակութասեր պետություն, բայց կատաղությամբ ոչնչացնում է աշխարհի մշակութային ժառանգության մաս կազմող հայկական թանկագին կոթողներ:

«ԱՊԱՌԱԺ»

Զավարյանականներին Արցախ է բերել հայրենի հողի կանչը

Արցախցի պատանիներն անհամբերությամբ են սպասում ամառային արձակուրդներին, քանզի հենց այդ ժամանակահատվածում է, որ Արցախում Սփյուռքից ժամանած երիտասարդները կազմակերպում են երկշաբաթյա, երբեմն նաեւ երեք շաբաթ տեւողությամբ ճամբարներ:

Արդեն 10 տարի է, ինչ Լիբանանի Զավարյան ուսանողական միությունը (ԶՈՄ) Արցախում իրականացնում է տարբեր ծրագրեր, այդ թվում նաեւ՝ կազմակերպում է պատանեկան ճամբարներ, որին մասնակցում են 9-16 տարեկան պատանիներ: «Զավարյան» ուսանողական միության կողմից կազմակերպված ճամբարների աշխարհագրությունը շատ հստակ է. նրանք 10 տարի շարունակ գործունեություն են ծավալում եւ ճամբարներ են կազմակերպում Քաշաթաղի շրջանի տարբեր համայնքներում:

Ճամբարների կազմակերպումն Արցախում եւ առհասարակ հայրենիքում՝ իրենց դրական ազդեցությունն են ունենում ոչ միայն տեղի երիտասարդների եւ պատանիների, այլեւ՝ ոչ պակաս դեր ու նշանակություն են ունենում սփյուռքահայ երիտասարդների համար. նրանցից շատերը հայրենիք են գալիս առաջին անգամ:

«ԶՈՄ-ը այս 10 տարիների ընթացքում ճամբարներ է կազմակերպել հիմնականում Քաշաթաղի շրջանում»,- «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց Լիբանանի Կենտրոնական կոմիտեի անդամ եւ ԶՈՄ-ի պատասխանատու Լեւոն Ավետանյանը եւ հավելեց,- 2013 թվականին Լիբանանի «Զավարյան» ուսանողական միությունը ճամբարներ է կազմակերպել Մոշաթաղում, Տիգրանավանում, Սարաթաղում եւ Այգեհովիտում: Վերջին տասնամյակում ԶՈՄ-ը ճամբարներ է կազմակերպել Հայաստանում եւ Արցախում: Միությունը վերջին տարիներին ճամբարներ է կազմակերպում Քաշաթաղի շրջանում: Յուրաքանչյուր տարի առնվազն երկու կամ երեք համայնքում կազմակերպում ենք ճամբարներ: Լիբանանում մեր տարեկան աշխատանքների պլանավորման ժամանակ մեծ ուշադրություն ենք հատկացնում հենց ճամբարների կազմակերպման ծրագրին, եւ այդ ծրագիրը շարունակական բնույթ է կրելու: Այս տարի ճամբարներ կկազմակերպվեն Հայաստանի Կոտայքի մարզում եւ Բերձորում»:

Սփյուռքի մեր հայրենակիցների կողմից կազմակերպված ճամբարները, դաստիարակչական կողմ ունենալուց բացի, նաեւ ուսուցողական բնույթ են ներառում իրենց մեջ. «Բնականաբար, յուրաքանչյուր ճամբար ունենում է իր «Դաստիարակչական բաժինը եւ ժամանցի բաժինը»,- նշեց Լեւոն Ավետանյանը,- Ճամբարի ընթացքում երեխաներին բաժանվում են շապիկներ, որոնց վրա պատկերված է լինում տվյալ տարվա ճամբարի խորհրդանիշը: Ճամբարի առօրյան հագեցած է լինում ուսուցողական պարապմունքներով: Սփյուռքի երիտասարդները համակարգիչ, պատմություն, անգլերեն եւ այլ նյութեր են ուսուցանում արցախցի պատանիներին: Նրանք նաեւ իրենց փորձն են փոխանցում տեղի պատանիներին: Եվ, ամենակարեւորը, ճամբարների արդյունքում կապ է ստեղծվում զավարյանականների եւ Քաշաթաղի շրջանի երեխաների միջեւ: Քաշաթաղում ամեն տարի անհամբերությամբ են սպասում զավարյանականների այցերին եւ կազմակերպվող ճամբարներին: Եվ ամեն տարի, երբ նոր խումբ է այցելում Արցախ, երեխաները անուններով հիշում են նախորդ տարիների կազմակերպիչներին եւ հարցնում բոլորի մասին: Առհասարակ, Արցախի հետ կապված մեր ծրագրերը մինչ օրս սահմանափակվել են ճամբարների կազմակերպմամբ, բայց, կարծում եմ, զուգահեռ այլ ծրագրեր եւս կմշակվեն՝ Արցախում կյանքի կոչվելու համար»:

Լեւոն Ավետանյանի խոսքերով՝ զավարյանականներին Արցախ է բերել հայրենի հողի կանչը. «Հայրենի հողի կանչն է զավարյանականներին Արցախ բերել: Եւ հենց դա է պատճառը, որ արդեն 10 տարի է, ինչ նրանք մեծ եռանդով ու խանդավառությամբ են սպասում ամառանը, որ գան Արցախ»:

Անի ԱՇԱՏՅԱՆ

Քաղաքակենտրոնացումը (ուրբանիզացիան) եւ մարդը

Մարդն ամուր կապերով կապված է շրջապատի հետ եւ կազմում է բնության բաղկացուցիչ մասը:

Երկրի վրա բնակչությունը խիստ անհավասաչափ է բաշխված: Արդյունաբերության կենտրոնացումը քաղաքներում զգալի չափով մեծացնում է ազգաբնակչության կուտակումը: Քաղաքակենտրոնացումը (ուրբանիզացիա) մարդկային հասարակության վրա թողնում է հասարակական-տնտեսական, սոցիալ-կենցաղային եւ կուլտուրական ազդեցություն, դրական է ազդում նրա մտավոր զարգացման վրա, հնարավորություն է տալիս անհատի մասնագիտական ու ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը: Մյուս կողմից, մարդը հեռանում է բնությունից եւ ընկնում վնասակար ազդեցությունների միջավայր, որի հետեւանքով աճում է տարբեր հիվանդությունների թիվը: Քաղաքակենտրոնացումը ստեղծում է նոր էկոլոգիական միջավայր, ուր ավելանում են բացասական գործոնները: Դրանցից առավել գերակշռող են տեղեկատվական, մտավոր եւ սոցիալական լարվածությունը, աղմուկը, սակավաշարժությունը եւ այլն:

Տեղեկատվական, մտավոր եւ սոցիալական լարվածությունը նպաստում է քաղաքացիների հոգեկան հոգնածությանը եւ հուզական սթրեսներին: Սթրեսը դարձել է քաղաքակենտրոնացման հիմնական գործոններից մեկը: Հուզական սթրեսը զարգանում է, երբ չի հաջողվում ստանալ սոցիալական կարիքների բավարարման համար անհրաժեշտ արդյունք: Քաղաքներում բնակվող բնակչությամ մոտ հաճախ են հանդիպում ստամոքսի խոցերը, սրտամեռուկի դեպքեր: Բարձր քաղաքակենտրոնացված երկրներում նկատվում է հոգեկան հիվանդությունների, ալկոհոլամոլության, թմրամոլության, ինքնասպանության դեպքերի մեծացման միտում: Միաժամանակ մեծանում է զանազան հիվանդությունների թիվը, որոնք հաճախ ուղեկցվում են այնպիսի ընդհանուր ախտանշաններով, ինչպիսիք են ախորժակի կորուստը, մկանային թուլությունը, արյան ճնշման բարձրացումը:

Միջավայրի աղտոտվածությունը եւս տարբեր հիվանդությունների զարգացման հիմնական պատճառ է հանդիսանում: Գիտատեխնիկական հեղափոխությունը, արդյունաբերության աննախընթաց զարգացումը քաղաքներում զգալի չափով աղտոտում են օդը տարբեր արտանետուկներով: Խոշոր քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունների գազային եւ փոշու արտանետումները, կենցաղային թափոնները թունավորում են շրջապատը տարբեր քիմիական տարրերով, որոնք օրգանիզմ են ներթափանցում հիմնականում շնչառական ուղիներով:

Մթնոլորտն աղտոտում են էլեկտրակայանները, գործարանները, բնակելի շենքերը, որոնք օդ են արտանետում ծծմբի օքսիդ, մուր, մոխիր, ծծմբաթթվի կաթիլներ եւ այլն: Ծծմբային գազի եւ օդի խոնավությունից առաջանում են ծծմբական թթուներ, որոնք թթվային անձրեւների առաջացման պատճառ են հանդիսանում:

Քաղաքների մթնոլորտի աղտոտվածության հիմնական պատճառներից մեկը վառելանյութով աշխատող փոխադրամիջոցներն են: Ավտոմեքենաները հանդիսանում են 10-25% հիվանդությունների առաջացման պատճառ:

Գիտական առաջընթացը պատճառ է նաեւ սակավաշարժության, որը «քաղաքակրթության հիվանդության» առաջացման պատճառ է: Սակավաշարժության պատճառով կմախքային մկաններն ու սիրտը ավելի քիչ են մարզվում: Հետեւաբար, ցանկացած ծանրաբեռնվածություն սրտի վրա կարող է ազդել՝ որպես արտակարգ գործոն եւ նպաստել որոշ հիվանդությունների առաջացմանը:

Խմելու ջրի աղտոտվածությունը նույնպես զարգացող քաղաքակրթությանն ուղեկցող գործոններից է:

Քաղաքներում բարձր է նաեւ աղմուկի մակարդակը, որը նպաստում է մի շարք հիվանդությունների զարգացմանը՝ արյան ճնշման բարձրացում կամ իջեցում, նյութափոխանակության, ներզատիչ գեղձերի եւ արյան շրջանառության հիվանդություններ: Աղմկոտ միջավայրում ապրող մարդկանց արյան մեջ ավելանում է խոլեստերինի քանակությունը, նկատվում է թուլության համախտանիշ:

Սնունդը նույնպես իր հերթին կարող է հանդիսանալ օրգանիզմի աղտոտման աղբյուր: Քաղաքների մոտակայքում աճեցվող գյուղատնտեսական մթերքներն աղտոտվում են տարբեր պարարտանյութերով, որոնց քանակը հաճախ գերազանցում է բնական մակարդակը: Շատ վնասակար են մեծ տարածում ստացած արհեստական հավելումներով հագեցած սննդատեսակները:

Սակայն, կարեւոր է նշել նաեւ այն փաստը, որ գիտատեխնիկական առաջընթացի եւ հասարակության սոցիալական զարգացման յուրաքանչյուր փուլ մարդկության պատմության մեջ լավացրել է կյանքի պայմանները եւ երկարակեցությունը, բարձրացրել է ազգաբնակչության քանակության վերին շեմը: Այս ամենն իրականանում է բժշկության եւ այլ բնագավառներում ձեռք բերված հաջողությունների շնորհիվ: Այսպես, ամենաբարձր կյանքի տեւողությունը հանդիպում է Ֆրանսիայում, Ճապոնիայում եւ Իսլանդիայում՝ 80 տարի, իսկ ամենացածրը Չադում՝ 39 տարի:

Քաղաքակենտրոնացված վայրերում բարձր է նաեւ կրթության մակարդակը, որի շնորհիվ բարձր է նման վայրերում ապրող մարդկանց ինտելեկտը: Գոյություն ունեն գործելու լայն մտահորիզոններ, որոնց շնորհիվ կատարվում են կյանքի համար խիստ անհրաժեշտ նոր հայտնագործություններ:

Մանուշ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Աֆորիզմներ

* * *

Երբ տղամարդը կարիքավորին օգնելու խոստումը չի կատարում, թե Աստծո առաջ է մեղք գործում, թե իր պատիվն է ոտնահարում:

* * *

Իրավացի լինելը դեռեւս ոչինչ չի նշանակում, եթե չես կարող ապացուցել:

* * *

Ով արդար է, ազնիվ ու բարի՝ սովորաբար լավ մարդ է համարվում:

* * *

Երբ չիմացողն է իմացողին կառավարում, անախորժություններից բացի այլ արդյունք սպասելն իզուր է:

* * *

Ամեն մի գործի որակ բնութագրում է դրա իրականացնողի մարդկային որակը:

* * *

Բարյացկամության դեֆիցիտը երբեմն արմատավորվում է որպես անբարյացկամության արատ:

* * *

Չկա ավելի քստմնելի, տգեղ ու նսեմացնող բան, քան այն, երբ անզորի, անպաշտպանի նկատմամբ օրինախախտումներ, կամայականություններ է գործադրվում:

* * *

Մարդ կա՝ օրինապաշտություն քարոզելով օրինախախտողներին է հովանավորում:

* * *

Անտարբերությունը հոգու անբուժելի արատ է:

* * *

Անազնիվ միջոցներով ձեռք բերված ճոխությունը երջանկություն չի պարգեւում:

* * *

Ուժեղի կողմից թույլին ճնշելը նույնքան հին ու հավիտենական է, որքան արդարության համար պայքարը:

* * *

Ձեռք բերված ազատության առաջին ցուցանիշը արդարության հաղթանակն է համարվում:

* * *

Սուտ ասելն ամոթի ու խղճի զգացումի բացակայության նշան է:

* * *

Սուտ ասողը չունի ոչ ամոթի, ոչ խղճի զգացում:

* * *

Արդարությանն ու ճշմարտությանը անձնվիրաբար ծառայում են հոգով ու մտքով խիզախները:

* * *

Անարդարությունը ոչ միայն դժգոհություն, այլ նաեւ մեծ ատելություն է առաջացնում:

* * *

Ժամանակը վերքեր է բուժում, բայց նոր վերքեր էլ է առաջացնում:

* * *

Մարդիկ կյանքի դժվարություններին դիմակայում են ոչ միայն տոկունությամբ ու գործիմացությամբ, այլ նաեւ պատրանքներով:

* * *

Երբ ճշմարտությունն ու մտերմությունը տարբեր բեւեռներում են հայտնվում, խոհեմն ընտրում է ճշմարտությունը:

* * *

Անազնիվ մարդուն հովանավորողն ազնիվ լինել չի կարող:

* * *

Հովանավորվող օրինախախտերի զոհերն անպաշտպան արդարներն են լինում:

* * *

Սեփական ուժերը գերագնահատելն ավելի է վտանգավոր, քան թերագնահատելը:

* * *

Քննադատություն չեն սիրում նրանք, ովքեր սխալներն ուղղելու ընդունակությունից զուրկ են:

* * *

Մարդ կա՝ շարունակ սրբությունների, ապաշխարհանքի մասին է խոսում, միաժամանակ մերձավորին հարվածում թիկունքից:

* * *

Փառք նրան, ով հոգով կողոպտված մարդ արարածին ապավինում, փրկում է կործանումից:

* * *

Պաշտոնյաներին արտոնություններ, լայն իրավունքներ տրվում են, բացի չսխալվելու երաշխիքից:

Էմմա ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ. 97 38 43, E-mail: info@aparaj.am
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 500: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ